ԴԻՒԱՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ

ԼԸ

(Զայս թուղթն է զրկեր Ապրօն Սուֆիան վարդապետին խստութեամբ):

Ծանի՛ր, իմ աչաց լոյս որդի Սուքիաս հայրապետ, չի լինի՝ չի լինի այս անարատ կոյս խաղաղութիւն պղծուի. մեծաւրաց մօտ փոքրաւորութիւնն կրակի մօտեւորութիւն է, որպէս առակ կայ կ'ասեն՝ կուրպիւր սուլթան աթաշի սուզան ալը. ամենեքեան քենէ կու կարծեն։ Այս աւր եկան աղաչելով զայս գրել տուին, որ ես այլ կու խնդրեմ ի քենէ, որ ջանք անես այս բանս զօրանայ, թէ չէ՝ Քրիստոս միածինն վկայ է՝ քեզի համար լաւ չի լինիր, որ այս խաղաղութիւնս այլ և այլ լինի. կարդա քիչ՝ իմացիր շատ։ Երկրպագութիւն արա հոգևորտիրոջայ սուրբ ոտիցն յիսնէ, ու զայս թուղթս իւրն մի՛ ցըցներ, քեզի խոստովանանք է։ Պէնտէի Ապրօ։

ԼԹ

(Ապրօյ Զելէպի Կ. Պոլսեն առ Եղիազար կաթողիկոս):

Պէնըմ էֆանտըմ սուլթանըմ հազրէթ-լէրընայ մուպարէք խաքիփայի չիրիֆլէ-ըընդն պէն չէքլան վէ ճանի կոնկուլտէն եուզում սուրբքատան սոնկրա, Քրիստոս Միածին սուլթանըմա պու խեղճ ազգ իչուն երկան կեանք վէ սիհաթի պէտէն պարգևէ. ամէն։ Պէնըմ ֆազիլէթլի էֆանտըմ, Ըստամպոլտա օլան մեծ և պզտիկ տոստընըզ վէ գայրի տոստընըզ պու պէնտէնըզէ կէլըպ իրիճա վէ նիեազ էթտիլէր պու խուսուս իչուն քի՝ ճէնապը չէրիֆընըզա պէն գուլուն տախի խաղաղութիւն էթմէնըզ իչուն պէնտէնէմէ իլան պիր ատամ էթէկընըզէ կոնտուրայիմ. պու գուլուընըզ տախի ֆուզարայա մէրհամէթ էյլէյէսընըզ պատճառով Յարութիւն Զելէպի գուլուենուզի հուզուրունըզա եուզ սուրմէք իչուն իրսալիւ պէնտէնզիա զելընմիչ տուր. քո սուրբ աղօթքով։ ա՛յ սուլթանըմ, որ ատացգ յերկրպագութիւն անէ. կը խնդրեմք ու խաղաղութեան խոնարհիս՝ մի՛ մեզ այլ վան սիրուն Քրիստոսի. բաւ է։ Ուլիսի ե. Պէնտէի Ապրօ։

Խ

(Ուխտագիր Եղիազար կաթողիկոսի ի Հալէպ ընդ Մարտիրոս վարդապետի Դէրիմեցւոյ) (*):

Քանզի ըստ աղդեցութեան ճշմարտութեան Հոգւոյն վկայեալ իմաստնոց՝ թէ Աստուած զմահ ոչ արար, այլ նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ և զտաւ ելկամուտ և վասն այնորիկ եկն Որդին Աստուծոյ յայտնութեամբ ըստ առաքելոյն՝ զի լուծցէ զգործս սատանայի. և արդարև ելոյծ, քանզի եղև միջնորդ և քակեաց զկրճիմն և միաւորեաց զբաժանեալսն անճառ սիրովն և եցոյց պատճառ քակման և ապականութեան զբաժանումն առելութեան ի բան՝ թէ Տուն բաժանեալ երկու՝ աւերի և քաղաք երկու բաժանեալ՝ կործանի, որոյ պատճառէ սրբազան անօթ նորին ընտրութեան առաւելապէս կշտամբելով նախատէ զհրապոյրսն առարկողին յասելն՝ թէ Զանտոհմս ընտրեաց աշխարհիս և զարհամարհեալս, զի զեռն իմն խափանեսցէ։ Քանզի այս է ստուգապէս կրկին եղջիւր չարազլուխ վիշապին, որով ջանայ որսալ զմարդիկ։ թէ հնար ինչ իցէ՝ և զընտրեալսն. և ի սոյն փորձ մտին բազումք ի մարդկանէ, որոց և յոգունք խոնարհութեան Տեառն զինու մարտեալ ընծայեցան ի սէր սիրելւոյն։ Բայց մեք յետնեալ ինոցունց գերընթաց շաւղաց, զտաք պարտեալ ընդդիմամարտէն ի բազում նուագս. ապա դարձեալ այցելութեանց ամենահնար ձեռնտուողին ծագեալ նշոյլ ի սիրտ բանականութեանս՝ նախագէմ խոնարհութեամբ և զարձիւ սիրելի որդեկի իմոյ տեառն Մարտիրոս վարդապետի, ապա բնամած սիրով և գթով իմս մեղապարտի՝ Եղիազար կաթողիկոսի, վասն նորագոյն պատուիրանի սիրոյ Տեառն Յիսուսի և վասն անխայելոյ ի գայթակղութիւն Արամեանս սեռի և վասն անեղծ հաստատութեան Սուրբ Աթոռոյն Երուսաղեմի և Սուրբ Էջմիածնի, զիջեալ ընդ սէր որդեկի իմոյ Մարտիրոս վարդապետի՝ ընկալայ զխնդիրն և հաւանեցայ ընդ բանսն, ետու զայս մուրհակ ուխտի հաստատութեան վասն երից իրաց.

(*) Ընդօրինակութեան մէջ ուխտագրիս վերնագիրն է. «Զեռագիր ուխտի ընդ Մարտիրոս վարդապետին որ ի Հալապ»։

digitised by A.R.A.R.@

Նախ՝ զի որպէս և ի սկզբանէ չունէի կամք և ոչ գոյր ի խորհուրդս իմ յինքեանէ եպիսկոպոս օրհնել և հաստատել ի թեմս Սուրբ Էջմիածնի և կամ զսրբալոյս մեռոնն առաքել ուստիք առանց խնդրոյ ուրուք, որպէս զիր երկոտասան բանից իմոց վկայեն ինձ, զնոսն ուխտեմ և հաստատեմ վկայութեամբ Աստուծոյ և ամենայն սրբոց նորա։

Երկրորդ՝ զի զեան իմն բառնալոյ և վասն կարեկցութեան սիրոյ զիջեալ առ խոնարհութիւն և դարձ որդեկի իմոյ Մարտիրոս վարդապետի՝ ձեռնտու եղէց ի կցորդութիւն պարտուց իւրոց և անարատունջ կացից ի ծառայութիւն Սուրբ Երուսաղեմի մինչև ինքն, անուամբ Սուրբ Երուսաղեմի, ջանացեալ այսր և անդր՝ կարիցէ լպրծիլ և ազատիլ ի պարտուց իւրոց։

Երրորդ՝ զի վասն առաւել սիրոյ թոյլ տուեալ զայս ամու հաւաքեալ զնուիրակաց Սուրբ Երուսաղեմի զնուէրսն ի Տանէն Ցունաց առաքել ի Կոստանդնուպօլիս և ժամանիլ ի ձեռն Սուրբ Երուսաղեմի վէքիլ Խոճա Սողոմոնին և նորին ձեռօք տալ ի պարտս պարտատիրաց։

Այս զիր ուխտի հաստատութեան եղև ի քաղաք Հալապ, թվին ՌՃԺԶ (= 1667) ի յուլիս ամսոյ իզ. ի մէջ Հոգեւոր հանն։

ԽԱ

(Ուխտագիր Մարտիրոս վարդապետի Դրիմեցւոյ ընդ Եղիազար կաթողիկոսի) (*)։

Բարեաց ամենայնի պատճառ Աստուած՝ տեսանի ի ստեղծուածս և ամենայն բարութիւնք ինմանէ մեզ պարգևեալ, որպէս ասէ ոմն ի սրբոց՝ թէ Ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալք ի վերուստ են իջեալ ի Հօրէն լուսոյ։ Իսկ առիթ և պատճառ ամենայն չարեաց և հայր ատելութեանց սկզբնաչարն սատանայ է, որ և ի Տեառնէ կոչեցաւ մարդասպան և թշնամի մերոյս բնութեան։ Ցորոյ առարկութեանց սկսեալ արմատացաւ սաստիկ խռովութիւնս և աղմուկս ի մէջ երկուց աթոռոցն գլխաւորագունից, այսինքն՝ Սուրբ Երուսաղեմայ և Սուրբ Էջմիածնայ կաթուղիկոսացն, որոց պատճառաւ և ես նուաստս ծառայ Քրիստոսի Մարտիրոս վարդապետս Դրիմեցի զնացեալ յարքունիսն առի զառաջնորդութիւն Սուրբ Երուսաղեմայ թագաւորական հրամանաւ ի ձեռաց Եղիազար կաթուղիկոսին։ Իսկ այժմ յաղագս խաղաղութեան և սիրոյ և զառաջինն հաստատելոյ զսիրոյն կատարելութիւն, յանձնեցի ի նա զիմս առաջնորդութիւն որ ի Սուրբ Երուսաղէմ, զի երթեալ հոգացէ զամենայն գործնառութիւն Սրբոյ Աթոռոյն, որպէս երէկն և յեռանդն, և ամենայն առ և տուր ընդ մուտն և ընդ ելն իւրով իշխանութեամբ եղիցի՝ առանց ուրուք հակառակութեան, զի ինձ հաճելի է և հաւանելի։ Բայց միայն էմր ու պէրաթի անունն իմ վերայ մնացէ ժամանակ ինչ, որ ես նովին անուամբ գընացեալ չրջեցայց յաշխարհն յԱրևելից առ ի գտանել հնարս ազատութեան պարտուցս և վերստին հաստատել զառաջին սէրն ի մէջ երկուց աթոռոցն սրբոց, և յետ այնորիկ եկեալ թէպիմ արարից առ եղիազար հոգևորտէրն զինչ և իցէ զամենայն առ իս, թէ՝ էմր և թէ պէրաթ, թէմէսուկ և հուճէթ և այլ զինչ և պիտոյասցի՝ առանց հակառակութեան, կամաւ և յօժարութեամբ իմով։ Եւ եթէ այնուհետև ախորժ թուիցի երկոցունցս կամաց՝ եղէց անդ իբրև զմի աշակերտացն իւրոց, ապա թէ ոչ՝ գնացից ուր և կամիցիմ, սիրով և առանց տրտնջանաց։

Եւ դարձեալ փակեցից զսա դաշնական վճռաւ և երդմամբք հաստատնովք, զի մի երևեսցի խաբէութիւն իմն և կեղծ ի բանս, զի եթէ վրիպիցեմ մի բան կամ այլ աւելի յասացելոց աստի, ընդ մատնչին Ցուդայի և ընդ խաչահանուացն դատիցիմ ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս։

Գրեցաւ զիրս դաշնական ի թվականիս մերոյ ՌՃԺԶ (= 1667) և յուլիս ի իզ. ի մայրաքաղաքս Բերիայ, որ է Հալապ, ի մէջ Սուրբ Երուսաղիմայ Հոգեւոր հանն։

Հրատարակեց՝ Մ. Ե. Ն.

(*) Ընդօրինակութեան մէջ ուխտագրիս վերնագիրն է. «Գիր սիրոյ եւ ձեռագիր ուխտի այս Մարտիրոս վարդապետին է»։

ՈՒՂՂԵԼԻՔ.— **Սիոնի** նախընթաց 3-4 միացեալ համարին մէջ երես 84ա. տող 19՝ **Են Եիւռցի** կարդալ՝ **Ենկիւռցի**։ երես 84բ. տող 3՝ **բէ զով** կարդալ **բէզով**։

digitised by A.R.A.R.@